Փոնջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի :

Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կէս արծաթ Մէճիտ կանխիկ վճարելի, բէ մայրաքաղաքիս եւ իր արուարձանաց եւ բէ գաւառաց համար :

վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :

Տեղական եւ գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :

Հատը 40 փարայ է, եւ կգտնուի մասնաւորապէս Պահճէ-գաբու ջրավաճառ եւ գրավաճառ Պօղոս աղայի խանութը :

Փոնջ

Ծանուցման տողը 3 դրուշ է մէկ անգամի համար : Աւելի ածած կընոյ աւելի անգամներու համար :

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ. Տ՚ճօրէն-Տէր Հ. Ս. Ալատճեան կ. Պօլիս Պալըկ-բազար Նաճիյէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Armenien Pountch
—16 Nafié-Han. Balouk-Pazar 16—
Constantinople

Թիւ 1893 ՇԱԲԱԹ 1884 ՅՈՒՆԻՍ 9

ԱԶԳԱՅԻՆ

Կաթողիկոսական Խնդիրն

Բեդրոսպուրկէն, յորմէ վերջին լուրը կ՚ապասուի կաթողիկոսական խնդրոյ համար և ամէն Հայ դէսաւին կսպասէ, այս շաբթու ալ ձայն մը չէլաւ : Հետևաբար, խնդիրն անորոշ վիճակի մէջ կմնայ, և Հայ ուսոտար լրագրութիւնն ի Պօլիս և ի Տփղիս՝ զանազան զրուցոյց, խորհրդածութեանց ու դիտողութեանց հրատարակութեամբ կամ արձագանգով կանցնին : Տակաւին և ո՛չ մէկ լրագիր չկրցաւ բացայայտ դրել թէ Տ. Ներսէս Սրբազան ի՛նչ ըսած է մայրաքաղաքիս ռուսական դէսպան Պանմ. Պ. Նելիւօֆի և նորա խորհրդականն Պ. Օնուի, իբր հրաժարման խնդրոյն վրայ տեղի ունեցած վերջին բանակցութեան առթիւ : Ո՛մանք կըսեն, թէ Տ. Ներսէս Սրբազան՝ ամենայն Հայոց Հայրապետութեան իրաւանց անվթար պահպանութեան և ընտրական կանոնակի համար Ազգին ունեցած իղձերն յայտնած է՝ իբր հրաժարականին վրայ պնդելով հանդերձ : Ա՛յլք կգրեն, թէ իրեն համար կաթողիկոսական պաշտօն վարելու անհնարութեան պատճառ նշանակած է՝ Հայոց Ազգին ա՛յն համարումն, զոր ունի առ ինքն, և որով իրմէ իբրև քաղաքագիտական անձէ մը մեծամեծ կյուսայ, մինչդեռ ինքն ա՛չ այդ հանգամանքն ունի և ա՛չ ձեռնհասութիւն : Ե՛ն որ անհիմն կհամարին այս ամէն զրոյցներն, և կպնդեն թէ Տ. Ներսէս Սրբազան չէր կրնար իւր հրաժարման համար տարբեր պատճառ ի մէջ բերել, քանի որ արդէն բաղմից անձնական տկարութիւն նշանակած է իբրև պատճառ հրաժարման, և մինչև իսկ «առաջ Աթոռոյ այսպէս կյայտարարեմ» ըսած է :

Խնդրոյն այս մասն՝ առ այժմ առանց մեր կարծիքն յայտնելու կանցնիմք, և փափաք կյայտնեմք որ արդիւնաւորին Տփղիսի պատուարժան ազգայնոց եռանդուն շարժումն, զոր հեռագրած է այս շաբթու Արևելք օրաթերթի յատուկ թղթակիցն. այսինքն՝ թէ Տփղիսի Արձագանք Հանդիսի արտօնատիրոջ դրդմամբ և առաջնորդութեամբ հանդանակութիւն բացուած է՝ Տփղիսի Մշակ լրագրոյ արտօնատիրոջ մեծ և հոյակառոյց օթևանն, 600 հազար րուպլիի (70000 լիրայի չափ) գընելու և Տ. Ներսէս Սրբազանի արամադրութեան ներքև դնելու համար : Ո՛չ միայն փափաք կյայտնեմք, այլև ի խորոց սրտի կմաղթեմք որ արդիւնաւորի, և մի՛ դուցէ իբրև լուկ ղրոյց և ցայց անցնի անհետի, ինչպէս դժբաղդաբար յաճախ տեսնուած է : Զեմք սակայն թաղական խորհրդոյ պաշտօնն ալ վարել՝ բռնակալելով ակնզեցւոց բոլոր հասութից վրայ. և թէ՝ Վառնայի Աւագ քահանայն դրած է ի Պաթրիարքարան, և Ազգային կնդրանական վարչութեան հրաւհանգոյց կսպասէ յանհամբերս :

—Օրմանեան Գեր. Տ. Մաղաքիա Ծ. վարդապետ՝ Մշոյ Ս. Կարապետ վանուց Միաբանական ընդհանուր ժողովոյ մեծագոյն մասին կողմանէ վանահայր ընտրուած լինելով՝ խառն ժողովոյ որոշմամբ դրուեցաւ առ Նորին Գերապատուութիւն, իւր հաւանութիւնն ստանալու համար :

— Ազգային վարչութեան դիւանադպիր Բարթող էֆէնտի Թէլեան՝ կիւրակէ օրը խաղիւղէն Ազգային երեսփոխան ընտրուեցաւ, քուէարկուաց մեծագոյն մասին քուէովը :

— Աբեղեան-Բումէլիի նորընծաիր կուսակալ Վսեմ. Կամրիել վաճա երկուշաբթի Պաթրիարքարան գնաց ի տես Ա.մեն. Ս. Պաթրիարք Հօր, և պատրիարքական Գեր. վիճանորդ Հայրն արժանավարիլ մեծարանօք ընդունեց զՆորին Վսեմութիւնը :

— Ս. Պատրիարք Հայրն անցեալ շաբթու առանձինն մատոյց Բարձր. Մեծ Եպարքոսին, երուսաղիմայ պարտուց խնդրոյն համար յատուկ պատգամաւորութեան մը միջոցաւ մատուցանելի գիրն : Նորին բարձրութիւնը բարեհաճեր է դոհացուցիչ պատասխանները տալ :

— Ղալաթիոյ նորընտիր թաղական խորհուրդն, որ կալուածոց անտուկէն թաղային անտուկին պահանջքն առանալու պայմանաւ յանձն առած էր առաջարկեալ պաշտօնը, տեսնելով որ չգործադրուիր այս պայմանը՝ խմբովին հրաժարեր է, բայց Թաղաքական ժողովն չընդունելով՝ յորդորանաց գիր գրեր է :

— Նալբէք-գափուի Թաղական առաժամանակեայ խորհրդոյ կոմիտէ չնորհակալութեամբ կհրատարակուի, թէ Մեծ. Մ. եղիա էֆէնտի Շահպազ, որ ազգասիրութեամբ ու կրօնասիրութեամբ հանրածանօթ է, և որոյ առատ նուէրներն Թաղին Ս. Նիկողէոսի ու երկսեռ վարժարանը միշտ կվայելեն, այս օրերս ալ եկեղեցւոյ բաղում կողմանց նորոգութիւնն ըրած է յոժարակամ, որ անհրաժեշտ պէտք եղած էր :

— Ղալաթիոյ վարժարանի աշակերտներէն Երուանդ Օտապաշեան անուն 17 տարեկան պատանի մը, անցեալ ուրբաթ, Գումգափու, ծաղկի հիւանդութեամբ կնքեց մահկանացուն : Սորա աշակերտակիցք յուղարկաւոր գացին, ծաղկեայ պսակ մը նուիրելով ի նշան իրենց վշտին և սիրոյն, և դամբանականներ խօսեցան Գումգափուի Մայր եկեղեցւոյ բակին մէջ :

— Բ. Դրնէն Ծանուցուեցաւ չորեքշաբթի Ս. Պատրիարք Հօր, Չոբանլու Մեհմէտ Ռուշտի Օղուսա. Սուլթանը Նորին սքանչացման թախանձագին ապաչաւութեան և բարեգործութեան սրտաշարժ օրինակ մը կընծայեն :

Այս ընկերութեան Տնօրէն Ժողովոյ անդամք են՝ Տիգրան Տօղրամաճեան, Սեհակ Քերիմ, Պերպերեան, Յակոբ Գաբրիէլեան, Տիգրան Մանասէճեան և Յակոբ Մխիթարեան էֆէնտիներն : Իսկ Ընդհանուր ժողովոյ դիւանի անդամք են, Մկրտիչ էֆէնտի Մըխիթարեան՝ Ս. Աստենապետ, Վրթանէս էֆէնտի Էնքսերճեան՝ Բ. ատենապետ, Միհրան էֆէնտի Սըրմաքէշեան՝ Ա. Ատենադպիր, Տիգրան էֆէնտի Մանասէճեան՝ Բ. ատենադպիր :

— Համբաւաւոր խեղաթիւրժ Շահնազար աղայի դուստր, Նոյեմի օրիորդ, 17 տարեկան, որ դեռ վարժարան կյաճախէր ուսման համար, և այժմէն Հայ իգականն սեռին պատիւ կբերէր իւր բարեմասնութեամբ, անցեալ շաբթու ժամատեղդի հիւանդութեամբ քանի մ՚օր անկողնոյ ծառայելէն յետոյ՝ հինգշաբթի գիշեր հրաժեշտ տուաւ աշխարհի, և հետևեալ օրն յուղարկաւորութեան տխրագղեցիկ հանդիսով կատարուեցաւ :

— Մշոյ Ս. Վրան դիւղէն Յարութիւն Սարգսեան անուն ազգային մը՝ որ Երուսաղէմ ուխտագնացութեան համար ճանբայ ելեր է հայրենի քէն, Իզմիր հասած ժամանակ հիւանդանալով տեղւոյն ազգային հիւանդանոցը դացեր և անդ մեռեր է : Սորա մէկ գիրն ելեր է, որով ուխտագնացութեան յատկացուցած 60 լիրայի գումարին 5ը Իզմիրի հիւանդանոցին, 3ը՝ ազգային Պատրիարքարանի, և մնացեալն իւր ազգականաց համար կտակած է : Եղբօրորդին, Գէորգ աղա Սարգսեան՝ Պատրիարքարանի մատն երեկ բերաւ յանձնեց հեռագրական անտուկին : Ա.յս առաջին անգամ է, որ Պատրիարքարանի համար կտակ կըսուի :

— Երէկ՝ մայիս 25 Թուով նամակ մը կծանուցանէ, թէ Կամախի բարեջան Առաջնորդ Սրբ. Տ. Վրթանէս քահանայ Երէցեան Երզնկայի Ընկերական վարժարանի մրցանակաբաշխութեան հանդիսին նախագահելով՝ ղուսանողս բարոյապէս քաջալերեց, և ի նշան իւր դոհունակութեան՝ հաճեցաւ մէկ Օսմ. լիրա նուիրել : Յիշեալ նամակէն կիմանամք նաև, թէ Տրապիզոնի յոյն երեւելի և պատուաւոր վաճառականներէն Վասիլաքի էֆէնտի Թէրզիխուլօֆ յիշեալ վարժարանն այցելելով՝ Թուրքերէն

— Ես ասում եմ, որ ձեր ամբողջ ընտանիքը ոչ մի կերպ չի կարող ապրել 37 ռուբլի ամսական ռոճիկով, եւ դուք ինքներդ էլ շատ լավ գիտեք, որ ես ճշմարիտ եմ ասում։

«Ձեր ամբողջ ընտանիքի համար 3673 ռուբլի ռոճիկ ստանալ» — կրկնեց Ն. Ն. Ֆիլիպպովը։

— Ներողություն, ես ձեզ ասացի, որ ես ստանում եմ 37 ռուբլի ամսական ռոճիկ, եւ ոչ ավելի։

— Ձեր ամբողջ ընտանիքը ապրում է ձեր ռոճիկով, չէ՞։

— Այո՛։

— Ձեր ընտանիքում ուրիշ ոչ ոք չի՞ աշխատում։

— Ոչ ոք։

— Ձեր ընտանիքը ապրում է ձեր ռոճիկով, եւ դուք ինքներդ էլ ասում եք, որ ձեր ռոճիկը 37 ռուբլի է ամսական, ուրեմն ձեր ընտանիքը ապրում է 37 ռուբլով ամսական։

— Ես ասում եմ, որ ես ստանում եմ 37 ռուբլի ամսական ռոճիկ, եւ ոչ ավելի։

— Ձեր ընտանիքը ապրում է ձեր ռոճիկով, չէ՞

ռոնատունը, զօրանոցք, մեծամեծաց ապարանք, հիւպատոսարանք, թղթատարութեանց կայարանք զարդարուեր լուսավառուեր, և հիւպատոսք՝ պաշտօնատարք՝ եւ բնակոխանք և այլք ի հնոհաւատութիւն դացեր են առ կուսակալն։

— Եչեխիշուլէի երկաթուղւոյ կայարանին մօտերը, Յօֆի անուն 20 տարեկան աղջիկ մը՝ որ տանը պատշգամն եղեր է օդ առնելու համար, ա՛յնքան ուժգնութեամբ կռթներ է վանդակներուն, որ արդէն փտած լինելով չեն տոկացեր բրդեր են, և խեղճ աղջիկն գետինն ինկեր մեռեր է անմիջապէս։

— Կըսուի, թէ Հերէքլէի գործարանին վերատեսչութեան պաշտօնը՝ գաղղիացի Պ. Մարթելի պիտի յանձնուի, որ մեռտքոադործութեան մէջ նշանաւոր է եղեր։

—Գասըմ-փաշա բնակեալ Հասան աղա անուն անձին կնոջ քոյրը նախընթաց օրն Իւսկիւտարի կողմերն ինքզինքը ծովը նետեր է, բայց հասեր ազատեր, և Քեամիլ փաշայի հիւանդանոցը տարեր են, ուր ըսեր է թէ ճանբան կորսընցունելով և այս պատճառաւ սըրտնեղելով՝ ինքզինքը ծովը նետած է։

— Եչնիպազարի կողմը Պալքանները ապաստանեալ պուլղար աւազակք պաշարուեր են կայսերական զօրքէն, և մեռեր պիտի ձերբակալուին եղեր։

— Երէկ 10 Սիլիսթրեցի գաղթական ընտանիք Պանտրմա ղրկուեցան ի բնակութիւն։

— Աթէնքի անգղիական հիւպատոս Պ. Մօրիս երէկ մայրաքաղաքս եկաւ։

— Ուրֆայի կառավարիչ ձեչլ պէյ հեռագրական գիծ մը հաստատել կուտայ Ռումֆալէյէն Պիրէճիկ։

— Օսմանեան գեղարուեստից վարժարանին հարցաքննութիւնք կատարուեցան երէկ, Օգոստ. Սուլթանին Թիկնապահ Ահմէտ վաշայի նախագահութեամբ կարգեալ Յանձնաժողովոյ միջոցաւ։ Մրցանակի արժանացած են մեր աղգայիններէն Վիչէն, Արշակ և Լեւոն Էֆէնտիներն։

— Սերպիոյ Թողեալ վայրագ մահմետականաց կողմանէ Պելկրատի Օսմանեան դեսպան Խալիտ պէյի դէմ յատուկ պատգամաւորութեան մը միջոցաւ Բ. Դրան մատուցեալ դանդատանաց քննութեան համար՝ արտաքին գործոց պաշտօնատան մէջ յանձնաժողով մը կազմուած է, և մտերը իւր քննութեանց տեղեկագիրը կմատուցանէ։

— Լուր տրուեր է Օսմանը լրագրոյ, թէ Օսմանեան ընդհանուր պարտուց վարչութիւնը մտերս նոր կարգադրութիւններ պիտի ընէ, և ամսաթոշակաց վրայ յաւելմունք պիտի լինին։

—Օսմանեան ընդհանուր պարտուց վարչական ժողովոյ անդղիական պատուիրակն Բարձր. մեծ Նպար.քոսին հետ տեսնուելով՝ Օսմանեան դրամոյ կարգադրութեան համար իւր կարծիքներն յայտներ է, և Նորին Բարձրութիւնն հաւանելով՝ խնդրեր է որ վարչական ժողովոյն խորհրդակցութեամբ ծրագիր մը մատուցանէ։

— Արևելեան–Րումելիի կուսակալ Կամբիւել փաշա՝ երեքշաբթի Յունայ պատրիարքական տեղապահին տեսութեան դնաց։

— Ագէհիլի մէջ (Դանեայի նահանգ) կարկուտն 93 արտաքաղբէն աւելի տեղի վրայ դանուած ափիոնն ապականեր է։

— Հալէպի, Իսկէնտէրունի և Պիրէճիկի մէջ դեռանաշարժ պատահեր է այս օրերս, բայց բարեբաղդաբար առանց ո՛ր և է վնասու։

— Պուլղարաց էքզարքն Օգոստ. Սուլթանին ներկայանալով, շնորհակալութիւններ մատոյց՝ ի Պրուսա Նորին Վեհափառութեան հրամանաւ վայելած յարգանացն ու մեծարանաց համար։

— Արևելեան–Րումելիի կուսակալ Կամբիւել փաշա՝ 5–10 օր ալ մայրաքաղաքս մնալէն յետոյ կուղևորի ի պաշտօնատեղին։

— Օգոստ. Սուլթանի ծննդեան տարեդարձի առթիւ, Հոդոսի մէջ ալ չքեղ հանդէս կատարուեր, և կայսերական հրամանաւ ներում շնորհուեր է բազմաթիւ բանտարկելոց։

— Ոստիկանութեան օրագրութենէն՝ որ հրատարակեալ է Թուրք լրագրոյ մէջ, կտեսնուի որ երէքշաբթի Խերնէ–գափուի կողմն և դուրսը ճանբորդաց և այգեպանաց վնաս հասցունող ոստիկանաց ըէվոլվէրով մահ ըսպառնացող Մերաճ Մէհմէտի, Բիւչիւք Իօմէրի և Իպրահիմի վրայ ոստիկանք ղրկուեր են՝ անպատճառ ձերբակալելու հրահանգով. և թէ՝ ոստիկանք, որ են Զաւուշ Զէրքէս Խուսրեվ և Աբիճ՝ Մէհմէտ Նուրի ու Ֆայիզ էֆէնտիներն, երեքշաբթի առաւօտ ժամը 10 ին տեսնելով Մալթէփէի հիւանդանոցի վարի կողմն պատահելով յիշեալ չարագործաց, առաջարկեր են անձնասուր լինել, սակայն նոքա դինուք դիմադրելով, Խուսրեվ էֆէնտին ձեռքէն վիրաւորեր են ըէվոլվէրով, և հետևաբար ոստիկանք ալ ի պէն դիմեր, և քառորդ ժամու չափ տեւեր է կռիւը, և հոսկ ուրեմն գերկընդխառն կռուեր են, և չարագործներէն Բիւչիւք–Իօմէր փամբը վիրաւորեալ, իսկ Մարաճ Մէհմէտ և Իպրահիմ սպանուեր են. ոստիկանաց կողմէն՝ Խուսրեվ էֆէնտի երկու վերք ալ առեր է, ինչպէս նաև Աբիճ էֆէնտի վիրաւորուեր է գլխուն չորս կողմէն, և Ֆայիզ էֆէնտի՝ մատներէն զարնուեր է։

— Վանայ անգղիական հիւպատոսը մայրաքաղաքս եկած է։

— Բաղէշի կուսակալ Ֆիքրի փաշա՝ Մշոյ կառավարչէն տեղեկանալով՝ առ ներքին գործոց նախարարութիւնն Յունիս 2 թուով հեռագրած է, թէ այս տարի ալ Մշոյ քանի մը կողմերը մարախ երևան եղած, բայց անյապաղ ի գործ դրուելով պէտք եղած միջոցներն՝ 16006 օխայ ժողովուելով ջնջուեցան, և մնացեալն ալ անհետելու չանքերն կշարունակուին։

— Հալէպի կուսակալ Ձէմալ փաշա առ ներքին գործոց նախարարութիւնն հեռագրած է հետևեալն Յունիս 2 թուով։ «Զէյթունի դիւղաքաղաքի մարդահամարի գործողութիւնն սկսաւ, և Զէյթունի Ալապաշըի դիւղացի Միքայէլ Քէհեա հոչակաւոր աւազակն ձերբակալեցաւ։ Մարաչի կառավարչէն հեռագրած է ըսյս, թէ Ալի Ռըզա անուն ոմն՝ որ Մարաչի մէջ ապրելով ինքզինքը Ռուսիոյ հպատակ կըսէր, և ռուսական հիւպատոսարանէն անձնագիր առեր էր, ձերբակալուեցաւ։ Ասոր ունեցած գրութեանց մէջ գտնուեր է Ռուսիոյ հպատակ Ալի Ռըզայի անունով կնքուած կնիք մը, և ասոր ալ ձերբակալութիւնը հրամայեցաւ։ Ալի Ռըզա ինքզինքը Ռուսիոյ հպատակ կըսէ, և ռուսական հիւպատոսարանէն անձնագիր առեր է, սակայն ռուսական հիւպատոսարանը կհաստատէ որ Ալի Ռըզա Ռուսիոյ հպատակ չէ, և ռուսական հիւպատոսարանէն անձնագիր չէ առեր։ Ալի Ռըզա ինքզինքը Ռուսիոյ հպատակ ցուցընելով՝ ռուսական հիւպատոսարանէն անձնագիր առնելու համար ստոր ձևեր ալ ըրեր է։ Ալի Ռըզայի ձերբակալութեան պատճառն այս է։ Ալի Ռըզա Մարաչի մէջ ապրելով՝ Ռուսիոյ հպատակ ըլլալու պատրուակաւ՝ Ռուսիոյ հպատակ Ասլան Ալի անուն ոմնէ 1000 ոսկի առեր է, և ասոր փոխարէն Ասլան Ալիի ունեցած տունը, որ Մարաչի մէջ է, ինքն առեր է։ Ասլան Ալի ալ Ռուսիոյ հպատակ չէ, և ռուսական հիւպատոսարանէն անձնագիր չէ առեր։ Ասլան Ալի Ռուսիոյ հպատակ ըլլալու համար ստոր ձևեր ալ ըրեր է

մասին տիրելով, մեռելս Անգղիա եկած է քանի մը ցեղապետաց հետ, դաղթականութեանց նախարարին՝ և եթէ հնար լինի, թագուհւոյն ներկայանալով՝ իւր՝ իշխանութեան վերահաստատութիւնը խնդրելու համար։ Թաւհիաօ՝ վայրենեաց յատուկ զարդերը կկրէ. այտերուն վրայ դանակով չինուած կիտուածք կան. չանաչական ակռայ մը սև ժապաւէնով կախուած է ալ ականջէն, և ձկան ոսկերուտեաց տրցակ մը՝ վերարկուին կոճակէն։ Մաօրիք՝ ուրիշ վայրենեաց հետ բաղդատմամբ՝ զարգացեալ են։ Լոնտոնի լրագիրք կառաջարկեն երես չտալ Թաւհիաոյի, յիշելով թէ 63 տարի յառաջ Մաօրեաց ուրիշ մէկ վեհապետն, Շոնկայի անուն՝ որ կարի հանդարտարար էր և աչխատասէր մարդ մ'էր ի սկզբան, Անգղիա գալով և ճօրճ Դ. թագաւորէն և ժողովրդէն պատուեալ քաջալերեցաւ, երբ վերադարձաւ իւր երկիրն, ուղեց մեծ թագաւորութիւն մը հիմնել, և հաղարաւոր անճանց կոտորման և ամբողջ ցեղերու անհետացման պատճառ եղաւ, մինչեւ ինքն ալ սպանուեցաւ։

= Անգղիոյ ազգային ժողովին մատուցեալ տեղեկագրէ մը կիմացուի, թէ անցեալ տարի ի Լոնտոն 14 հոգի մեռեր են անօթութենէ։

= Պելճիոյ երեսփոխանական վերջին ընտրութեանց մէջ, կղերական կուսակցութեան յաղթող հանդիսանալուն պատճառաւ, մեծ անկարգութիւնք ծագեցան ի Պրիւսէլ. բազում անձինք վիրաւորեցան և բազում շէնքեր ջնաւեցան. նախարարք խմբովին հրաժարեցան. խուռն բազմութիւն մը աղաղակաւ և երգովք չրջեցան գլխաւոր թաղերը. խումբ մը յարձակելով պապական դրատան վրայ՝ չարդակոտոր ըրին ապակիներն, և վար առին պապական դինանչանը։

= Հապէշոյ թագաւորը վերջապէս յանձն առեր է՝ օգնութեան զօրք ղրկել Սուտանի սուտ մարգարէի դէմ, ի փոխարէն՝ առանց ո'ր և է պահանջում ընելու։

= Մարոքի Սուլթանը 40 խստամբ երիտասարդ ղրկեց Պելճիա՝ դինուորական կրթութիւն առնելու համար։

= Դերմանիոյ կայսրն առաջիկայ Յուլիս 15ին կաթէդրն կերթայ, ուր պիտի մնայ մինչև Օգոստոս 10։ Հաւանական է, որ Աւստրիոյ կայսեր հետ տեսակցի անդ։

ՍՅԼ ԵՒ ՍՅԼՔ

××× Խըղճալոյ դէպ ի՞նչ է չէ՞մ ի՞մ ըսածս։ — Խըղճմտանք, Նողայք, և այլք, որ մեծաւ մասամբ Ասիոյ դաշտերն և Ռուսիոյ հարաւային կողմերը կբնակին, միայն ձի, կով, ոչխար և ուղտ արածելով կզբաղին։ Իրենց համար չոր քոտանեաց մէջ ամենէն յարգի և անական պիտոյից համար անհրաժեշտ հարկաւոր է ձին, այնպէս որ կրնամք ըսել թէ այս կենդանին Խըղճմտանքներու համար այն է, ինչ որ է եղնիկը լարլանացւոց, էսքիմացւոց և այլ բևեռնային ժողովրդոց համար։ Խըղճմտանց ձիերը գեղեցկութեան, զօրութեան և տոկունութեան կողմանէ հրաշակուած են, և միայն ուղևորութեան և բեռնակրութեան կգործածուին, որովհետև բնիկք մատակ ձիերն ուղևորութեան և բեռնակրութեան գործածելու սովորութիւն չունին։ Ձէմարիտ Խըղճմտանց մը երբէք մատակ ձիու վրայ չհեծներ, ինչպես մեր մէջ պճնասէր ձիաւոր մը կսլաք վրայ չհեծներ։ Մատակ ձիերը լաւ կերպով խըղճմտանելով և մնուցանելով իրենց կաթով կովու տեղ կը բռնեն. օրը 4 էն մինչև 8 անգամ կը կթեն և ամէն անգամ 0.60 էն մինչև 2.25 լիտր կաթ կարտադրեն, որ շատ քաղցր նիւթերով լի է։ Կթելու պարտականութիւնը կանանց վրայ է. ձագը միայն գիշերը մօրը քով կձգեն և մէկ մ'ալ կթած ժամանակ մօրը քով կտանին, քանզի սա առանց անոր իւր ըսլը կաթը չտար։ Խըղճմտանց լաւ գիտեն, թէ ո'րչափ արդիւնաւոր և օգտակար են այս կենդանիք, եթէ լաւ և առատ ճարակ ու մնունդ հայթայթուելով խիստ մաքուր պահուին (յայտնի է որ անմաքրութիւնը, կենդանւոյն կաթին քանակութիւնն և որակութիւնը կփոխէ)։ Քանի է կաթին կրած տարբերութեան վուիւխութիւնը, որ իւր շաքարային նիւթոյ՝ գինական և կամենային խմորման ենթարկուելով կլինի։ Խումբը պատրաստած ժամանակ՝ իրենց առաջին գործն է գինային խմորումը կամ թըթուութիւնը զօրացնել, կամենայինը տըկարացնելու համար. և սոր մէջ ալ դիւրաւ կրնան յաջողիլ, ընդհանրապէս խումբ շինելու մէջ վարպետ լինելով՝ որ երբեմն այն նպատակին հասնելու համար, մինչև անգամ արուեստական միջոցներու կդիմեն։ Երէք տեսակ խումիս կայ. տարի, միջակ և զօրաւոր։ Ցկար կկոչուի այն խումին՝ որ միայն 24 ժամուս խմորման կամ թթուելու կենթարկուի. կաթի երեսէյթ կառնու և իւր քաղցր համովը, «սիտրը» ըսուած ըմպելիքին կնմանի։ Չօրաւոր խումին այն է, որ երէք օր թթուելու կենթարկուի, իւր բոլոր կաթնային յատկութիւնը կկորնցնէ, կըլլայ կծու, թթու և փրփրալից (եթէ պինդ կերպով լոցուած կուժերու մէջ պահուի)։ այնչափ կազ կպարունակէ որ գիւրաւ կընայ շատ բանիայի գինւոյ հասարակ չիշ մը պայթեցնելով կաոր կաոր ընել. գաւաթի մը մէջ լցուելով՝ իւր փրփուրը նորա $\frac{3}{4}$ մասը կբռնէ։ Մէջտակ խումիս կկոչուի այն որ առնուազն հասկցողութիւն մը կուտայ թէ ինչ է ընդհանրապէս թըթուած կամ խմորուած կաթը. և է ճշդի խումիսին տիպարն և բնիկ թափառականոց մէջ տարածուած ըմպելին։ Խըղճմտանց մէջ գինհարական յատկութիւնը ճանչցած են։ Բայց սա, բաց ի իւր գինհարական անվնաս ազդեցութենէն, ունի ուրիշ բուժիչ յատկութիւններ, որոց լաւ ապացոյցը երկրին բնիկներն են։ Կարժէ որ միայն ուշադրութիւն ընենք այն դունատ և նիհար խըղճմտանց վրայ, որ ամենակարճ միջոցի մը մէջ, գործածելով խումիսը, կդիմեայ, կզօրանայ և երեսին վրայ առողջ գոյն մը կստանայ։ Խումիսին այս ամենաօգտակար յատկութիւնն առաջին անգամ ճանաչողը բժշկած ուշադրութիւնը դրաւեց, որ յետոյ սկսան ծանր և մաշեցուցիչ հիւանդութիւններէ նոր առողջացեալ խումիս խմցնել։ Անգղիացի բժիշկ մը Հարրիք մականուանեալ, որ երկար ժամանակ քումիսի վարձերով զբաղեցաւ, հասկնալու համար թէ իրաւ օգտակա՞ր է խումիսը՝ թոքախտ ունեցողներու համար, նորա բուժիչ ազդեցութեանը վրայ ա՛յն աստիճան համոզուեցաւ ու զարմացաւ, որ սկսաւ բոլոր թոքախտէ տառապող հիւանդներն առաջարկել, որ ուղևորութիւն մը ընեն ասիական դաշտերուն մէջ, իբր թէ կարճ և դիւրագին ճանապորդութիւն մ'է։ Բայց այժմ հարկ չկայ Ասիոյ դաշտերը թափառելու, որովհետև բոլոր Ռուսիոյ քաղաքաց մէջ դեղարանք խումիսը կպատրաստեն մեծ խըղճմտանով, ուր ծխելիչ հիւանդութիւնները տառապող հազարաւոր անձինք իրենց առողջութիւնը կգըտնեն, և այս պատճառաւ է որ խումիսն օր քան զօր կտարածուի համայն Ռուսիոյ ժողովրդոց մէջ։ Ամէն տեղ մանաւանդ օդաւէտ տեղեր, անտառաց մօտ, գեղջկական գեղեցիկ հիւրանոցներ կը չինուին, ուր ամառը կանցընեն հիւանդք՝ խումիսը խմելու համար։

× 1883ին համայն Ռուսիոյ մէջ արտադրեալ ոսկւոյ արժէքն է 3676000 անգղիական ոսկի, յորմէ Արեւելեան Սիպերիոյ վերաբերի 1840000, Արեւմտեան Սիպերիոյ՝ 36000, Ամուռի գաւառի՝ 680000, Ուրալ լերանց՝ 520000։ Վերջին տասն տարւոյ մէջ Ռուսիոյ հանքերէն 512000 անգղիական ոսկւոյ արժէքով ոսկի հանուած է։ Դրբեթէ բոլորն ալ կայսերական փողերանոցը կերթայ դրամի փոխանակելու, որովհետև տարին հազիւ 320 022 անգղիական ոսկւոյ արժողութեամբ ոսկի կդործածուի ճարտարուեստից մէջ։

× Ի Նիւ–Եորք Զարլզ Բէրսօլ անուն Ամերիկացին մեռելս դրաւ դրաւ՝ օրը 60 ական հազիւթ մէկ անգամէն, շաբաթ մը չարունակ ուտելու համար, և յաջողեցաւ առանց բնաւ դժուարութիւն դգալու։ Միայն քաղաքավարութեան համար է եղեր որ ուտելի ուտել չէ ուզեր։

× Ի Չիքակո (Միացեալ Նահանգք) հացագործ մը կայ 470 տան համար, մնալաճառ մը՝ 905 տան, նպարավաճառ մը 89 տան, և գինեվաճառ մը՝ 35 տան համար։

× 1883 ին, Անգղիոյ մէջ երկաթուղւոյ վրայ մեռած անձանց պաշտօնական թիւն է 1167, և վիրաւորեալք՝ 4187։ Կառախումբ 104 անգամ իրարու բախած են, 57 անգամ՝ ուղևոր պարունակող չոգեկառքեր դէպի դուրս ելած են, 154 անգամ կառախմբոց առջև արգելք եղած է, (ոչխարաց հօտեր, ևայլն)։ Բայց երկաթուղւոց վրայ անզգուշութեամբ ինկածներուն թիւն աւելի է քան կառախմբոց ընդհարման կամ դէպ դուրս ելնելուն պատճառաւ վնասեալց թիւը։

× Միացեալ Նահանգաց Ալպանի նահանգին մէջ բնակեալ գերմանացի կին մը, որ իւր խըղճմտանքի արդիւնքը վերջերս մնանկացեալ դրամատան մէջ յանձնած էր, խելագարելով ըսպաննեց իւր զաւակներէն հինգն, և վեցերորդ զաւկին հետ ինքզինք սրարշաւ ընթացող կառախմբի մը ներքեւ նետելով մեռաւ։

× Թունքին՝ որուն Տաղղիա տիրոջ մեռելս, մեծահարուստ երկիր մ'է։ Ա.յս երկիրն իւր մէջ կպարունակէ ածխոյ, և այլ ճոխ հանքեր։ Թունքինի 17 գաւառաց մէջ ոսկի կգտնուի։ Անհամար Թունքինցիք և Չինացիք կաշխատին արծաթի և պղինձի հանքերուն մէջ։ Հանքայ չատը կպատկանի Չինաց, որք ճարտարօրէն խոյս կուտան՝ հանքայ տուրքը Թունքինի կառավարութեան վճարելէ։ Թայ–Նկիւյենի գաւառին մէջ չորս ոսկւոյ և հինգ արծաթի հանք կան։ Պաքնինի գաւառին մէջ՝ մէկ ոսկեհանք. Հօնկ–Հօայի գաւառին մէջ՝ յոյժ ճոխ երկու հանքեր կան ոսկւոյ, և երկու հանք՝ պղինձի. ի Թույէն–Քուանկ չորս ոսկւոյ հանք, երկու՝ արծաթի, և մէկ՝ պղինձի։ Ա.յս հանքայ բաժնետէրք են ըստ մեծի մասին Չինացի վաճառականք, որք ճոխ շահաբաժիններ կստանան։

×× Չինաստանի ժողովուրդը չորս դասուց բաժնուած է. գրագէտք, հողագործք, արհեստաւորք, վաճառականք. առաջին երկուքն ազնուական կհամարուին. հողագործք բացառիկ պատիւ կը վայելեն, որովհետև հոգն է տրոյ գլխաւոր առարկայն ու աղբիւրը. ամեն պատիւ՝ ասոնցմէ ոմանց մըցմամբ կտուողուն. ուսումն ու հմտութիւնն է, որ զմարդիկ ի պատիւ և յիշխանութիւն կառաջնորդէ։ Քննութիւններն յաջողութեամբ անցընող երիտասարդը մեծ հանդիսիւ և թափորով կտարուի իւր բնակարանն, որոյ պատերուն վրայ կիխակցութին նորա յաղթութիւնը ծանուցանող գրեր։

×× Անգղիոյ մէջ մեռելս հրատարակուած է՝ 1881 ին գործոյ մէջ դանուող կանանց թուոյն, և նոյա զբաղմանց պէսպիսութեան վրայ միճակագիր մը, որ՝ 1871 ին կիր մ'է։ Ա.յս երկիրն իւր մէջ կպարունակէ ածխոյ, և այլ ճոխ հանքեր։ Թունքինի 17 գաւառաց մէջ ոսկի կգտնուի։ Անհամար Թունքինցիք և Չինացիք կաշխատին արծաթի և պղինձի հանքերուն մէջ։ Հանքայ չատը կպատկանի Չինաց, որք ճարտարօրէն խոյս կուտան՝ հանքայ տուրքը Թունքինի կառավարութեան վճարելէ։ Թայ–Նկիւյենի գաւառին մէջ չորս ոսկւոյ և հինգ արծաթի հանք կան։ Պաքնինի գաւառին մէջ՝ մէկ ոսկեհանք. Հօնկ–Հօայի գաւառին մէջ՝ յոյժ ճոխ երկու հանքեր կան ոսկւոյ, և երկու հանք՝ պղինձի. ի Թույէն–Քուանկ չորս ոսկւոյ հանք, երկու՝ արծաթի, և մէկ՝ պղինձի։ Ա.յս հանքայ բաժնետէրք են ըստ մեծի մասին Չինացի վաճառականք, որք ճոխ շահաբաժիններ կստանան։

×× Չինաստանի ժողովուրդը չորս դասուց բաժնուած է. գրագէտք, հողագործք, արհեստաւորք, վաճառականք. առաջին երկուքն ազնուական կհամարուին. հողագործք բացառիկ պատիւ կը վայելեն, որովհետև հոգն է տրոյ գլխաւոր առարկայն ու աղբիւրը. ամեն պատիւ՝ ասոնցմէ ոմանց մըցմամբ կտուողուն. ուսումն ու հմտութիւնն է, որ զմարդիկ ի պատիւ և յիշխանութիւն կառաջնորդէ։ Քննութիւններն յաջողութեամբ անցընող երիտասարդը մեծ հանդիսիւ և թափորով կտարուի իւր բնակարանն, որոյ պատերուն վրայ կիխակցութին նորա յաղթութիւնը ծանուցանող գրեր։

ՀՈՂԱՏՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԵՒ

ՍՂՊԱՄԱՐԱՅ ՈՒ ՍԻՍ

Գերդ. Տ. Մաթէոս եպիսկոպոս Իզմիրեան գրած է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ընդհանրական հայրապետութեան, եւ Աղթամարայ ու Սսոյ կաթողիկոսութեանց հաստատութեան, իրաւասութեան եւ պարտուց ու պաշտամանց վրայ, պատմութեամբ՝ արձանագրութեամբ եւ հին ու նոր վաւերական պաշտօնագրերով հաստատեալ զամենայն։ Ընթերցողն լիուլի ծանօթութիւն կստանայ Հայաստանեայց Հայրապետութեան եւ Աղթամարայ ու Սսոյ անցեալ եւ ժամանակակից վիճակաց վրայ։ Այնչափ եմք, թէ մեծ կարեւորութիւն ու օգտակարութիւն ունի այս հրատարակութիւնը, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ, յորում ամենայն Հայոց Հայրապետութեան գերագոյն գահն թափուր կը գտնուի, Սսոյ կաթողիկոսական խնդիրն կը յուզուի գեռ եւ Պատրիարքի բարեփոխութեան վրայ կխօսուի։ Գերդ. Իզմիրեան քաջ հետազօտած ու խմաստասիրած է զայս ամենայն, եւ լուսաւոր ծանօթութիւններ կրնծայէ հեղինակին Հայոց։ Գրքին սկիզբը զրուած ցանկը աչքէ անցուցողն պիտի տեսնէ, թէ ո՛րչափ նշանաւոր անցքեր նշանակեալ են խնամով, եւ քանի՛ նշանաւոր մեծարելի է Հայկական հարստութեանց միակ մնացորդն եղող Հայրապետութիւնն։ Կարժէ, որ ամեն Հայ ունենայ հատ մը։ կարժէ որ ամեն Հայ թանգարանի մէջ գլխաւոր տեղ մը բռնէ այս գիրքը։

Կգտնուի լրագրոյս Գրատեղեակը, Պօլիս Պալըգ–բազար Նաֆիյէ–խան վերի յարկ թիւ 16. Պաղէշ–գարու Զբրաւճառ Փողոս ազգայի խանութը։ Կը բաղկանայ 1300 երեսանէ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՈՒԿ ՀՈՒԼԼՕՈՒԷՅԻ

Լնարգի, սաւմոքի եւ աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, ամեն ջղային տկարութեան ուժաթափութեան եւ տխրութեան համար. կը ջնջէ եւ անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի եւ երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ եւ դրդռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ արտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լցուած կազեր, գլխի ցաւեր կվանէ, մարսողութիւնը կչափաւորի, եւ մարմինը մաքրութեամբ բոլոր այն աղտեղութիւններէ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց ըսկզբնապատճառ կըլլան, առողջ ու ժեղ եւ բնական դիրքը կդնէ նոյն։

ONCUENT HOLLOWEY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷՅԻ

Մարթային հիւանդութիւն եւ վերք բուժելու մասին ունեցած պատասխանն յաւերժական յաջողութեանը չհաւասարիր բան մը ուրիշ դեղ մը. հին կամ նոր թուղնաւոր վերքեր, ուռնչք, քաղցկեղ (չէրչենկ), սրունից եւ ստեանց վերքեր կամ բոլորովին կանգնին եւ կամ կլաւանան. օգտակար է նաեւ հարբուխի, հազի, սրտի բարախման, մանաւանդ յօդացաւ (եէկ) ըսուած հնամենդութեան, իւր կաղդուրիչ եւ զօրաւոր ազդեցութեամբը խոյլ («ըրածա») հիւանդութեան ապաքինիչ զօրութիւնը ինչ աստիճան որ ըլլայ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տիպի վրայ, որ կգտնուի ամեն դեղավաճառներու քով, եւ մանաւորապէս Պազէչ–դարու Թաչ–խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, Թիւ 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի աւ հեղինակին տօքթօր Հոլլօուէյ Իլֆոռտ Օքսֆօրտ փողոց թիւ 533։

ՏՆՕՐԻՆ ԵԻ ՏԷՐ

Հ. Ս. ԱՂԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶԱՆՆԱՆ ԵՒ ԸՆԿ.
Բիզա–պաշա խան Թիւ 3